Հ Ր Ա Մ Ա Ն

17 մարտի 2022թ. Թիվ 127-Լ
ք. Երևան

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ս.թ. մարտի 18-ից Բանկի Հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագնի 26-րդ կետով սահմանված՝ անկանխիկ մուտքից գումարի կանխիկ տրամադրման համար սակագինն այսուհետ փոփոխել հետևյալ կերպ.
   - ՀՀ դրամով ՝ 0.3 %, նվազագույնը 200 ՀՀ դրամ,
   - ԱՄՆ դոլարով ՝ 3 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ,
   - Եվրոյով ՝ 2 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ,
   - ՌԴ ռուբլով ՝ 1 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ:
2. Սույն հրամանի 1-ին կետով նշված սակագինը կիրառել նաև յուրաքանչյուր արտարժույթով վարկի կանխիկացման դեպքում՝ անկախ վարկի գումարի չափից:
3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել 04.03.2022թ. թիվ 104-Լ հրամանը:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Styopa Zakinyan Digitally signed by Styopa Zakinyan Date: 2022.03.17 17:30:28 +04'00' **Ստյոպա Զաքինյան**